ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«28» դեկտեմբերի 2020 թ. № 1249-Լ

ՀՐԱՄԱՆ

ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԽՍԱՏԱՐՈՒԹՅԱՆ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՔԱՆԱԿԻ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԻՆԱՑՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մարտի 30-ի N 546-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված՝ էլեկտրոնային եղանակով մաքսային հայտարարագրման իրականացման կարգի 10.3-րդ կետի երկրորդ պարբերությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 16-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել արտաքին տնտեսական գործունեության ընթացքում առանձին գործողությունների ծախսատարության, փաստաթղթերի քանակի և ժամանակատարության միջինացված ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

12/28/2020

X

ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Signed by: HOVHANNISYAN EDVARD 2001830505

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ * ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ

ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

Հավելված
ՀՀ ՊԵԿ նախագահի
«28» դեկտեմբերի 2020թ.
թիվ 1299 Լ հրամանի

ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԽՍԱՏԱՐՈՒԹՅԱՆ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՔԱՆԱԿԻ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԻՆԱՑՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Արտաքին տնտեսական գործունեության ընթացքում առանձին գործողությունների ծախսատարության, փաստաթղթերի քանակի և ժամանակատարության միջինացված ցուցանիշների (այսուհետ՝ միջինացված ցուցանիշներ) հաշվարկն իրականացվում է յուրաքանչյուր օրացուցային ամսվա կտրվածքով հայտարարատուի կողմից լրացված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մարտի 30-ի N 546-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված՝ էլեկտրոնային եղանակով մաքսային հայտարարագրման իրականացման կարգի N 1 օրինակելի ձևով սահմանված հարցաթերթերում (այսուհետ՝ հարցաթերթեր) արտացոլված տեղեկատվության հիման վրա:

2. «Բացթողում՝ ներքին սպառման համար» և «Արտահանում» մաքսային ընթացակարգերով, իսկ Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ արտահանման դեպքում նաև «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ապրանքների համար յուրաքանչյուր օրացուցային ամսվա կտրվածքով հաշվարկված միջինացված ցուցանիշներն արտացոլվում են՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մարտի 30-ի N 546-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված՝ էլեկտրոնային եղանակով մաքսային հայտարարագրման իրականացման կարգի N 2 օրինակելի ձևով սահմանված հաշվետվության (այսուհետ՝ հաշվետվություն) մեջ:

3. Հարցաթերթերում լրացված տեղեկատվության հիման վրա ներմուծվող ապրանքների մասով առանձին գործողությունների ծախսատարության միջինացված ցուցանիշների հաշվարկն իրականացվում է հետևյալ կարգով՝

1) «Մաքսային հայտարարագրի լրացման և մաքսային մարմիններին ներկայացման վրա ծախսվող ընդհանուր գումար» միջինացված ցուցանիշի հաշվարկն

իրականացվում է օրացուցային ամսվա ընթացքում լրացված ներմուծման բոլոր հարցաթերթերի 1-ին տողում (ապրանքների մաքսային հայտարարագրի կամ դրան փոխարինող այլ փաստաթղթի լրացման և մաքսային մարմիններին ներկայացման վրա ծախսված ընդհանուր գումար՝ ըստ մաքսային հայտարարագրով հայտարարագրված առանձին ապրանքների) ներկայացված արժեքների հանրագումարը տվյալ ամսվա ընթացքում լրացված ներմուծման հարցաթերթերի ընդհանուր քանակի վրա բաժանելու միջոցով,

2) «Արգելքների և սահմանափակումների պահպանվածությունը հաստատող փաստաթղթերի ստացման վրա ծախսվող ընդհանուր գումար» միջինացված ցուցանիշի հաշվարկն իրականացվում է օրացուցային ամսվա ընթացքում լրացված ներմուծման բոլոր հարցաթերթերի 2-րդ տողում (արգելքների և սահմանափակումների պահպանվածությունը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերի (լիցենզիաներ, թույլտվություններ, հավաստագրեր և կամ այլ փաստաթղթեր) ստացման վրա ծախսված ընդհանուր գումար՝ ըստ մաքսային հայտարարագրով հայտարարագրված առանձին ապրանքների) ներկայացված արժեքների հանրագումարը տվյալ ամսվա ընթացքում լրացված ներմուծման այն հարցաթերթերի ընդհանուր քանակի վրա բաժանելու միջոցով, որոնցում լրացված է հարցաթերթերի 2-րդ տողը:

4. Հարցաթերթերում լրացված տեղեկատվության հիման վրա ներմուծվող ապրանքների մասով առանձին գործողությունների համար պահանջվող փաստաթղթերի քանակի մասով «մաքսային ձևակերպման ընթացքում մաքսային մարմիններին տրամադրվող փաստաթղթերի ընդհանուր քանակ» միջինացված ցուցանիշի հաշվարկն իրականացվում է օրացուցային ամսվա ընթացքում լրացված ներմուծման բոլոր հարցաթերթերի 3-րդ տողում (ներմուծման մաքսային ձևակերպումների ժամանակ տրամադրված փաստաթղթերի ընդհանուր քանակ (բացի մաքսային հայտարարագրից) ներկայացված փաստաթղթերի ընդհանուր քանակը լրացված ներմուծման հարցաթերթերի ընդհանուր քանակի վրա բաժանելու միջոցով:

5. Հարցաթերթերում լրացված տեղեկատվության հիման վրա ներմուծվող ապրանքների մասով առանձին գործողությունների ժամանակատարության միջինացված ցուցանիշների հաշվարկն իրականացվում է հետևյալ կարգով՝

1) «Ապրանքների ժամանումից մինչև ժամանակավոր պահպանման վայրերում տեղակայում» միջինացված ցուցանիշի հաշվարկն իրականացվում է օրացուցային

ամսվա ընթացքում լրացված ներմուծման բոլոր հարցաթերթերի 5-րդ տողում (ապրանքների տեղակայում ժամանակավոր պահպանման վայրերում) արտացոլված ժամանակահատվածների հանրագումարը տվյալ ամսվա ընթացքում լրացված ներմուծման հարցաթերթերի ընդհանուր քանակի վրա բաժանելու միջոցով,

2) «Ապրանքների ժամանումից մինչև մաքսային հայտարարագրի կամ դրան փոխարինող այլ փաստաթղթի ներկայացում, եթե ապրանքները չեն հանձնվել ժամանակավոր պահպանության» միջինացված ցուցանիշի հաշվարկն իրականացվում է օրացուցային ամսվա ընթացքում լրացված ներմուծման բոլոր հարցաթերթերի 7-րդ տողում (ապրանքների մասին հայտարարագրի կամ դրան փոխարինող այլ փաստաթղթի ներկայացում) արտացոլված ժամանակահատվածների հանրագումարը տվյալ ամսվա ընթացքում լրացված ներմուծման հարցաթերթերի ընդհանուր քանակի վրա բաժանելու միջոցով,

3) «Ապրանքների մասին հայտարարագրի կամ դրան փոխարինող այլ փաստաթղթի ներկայացումից մինչև դրա գրանցում մաքսային մարմինների կողմից» միջինացված ցուցանիշի հաշվարկն իրականացվում է օրացուցային ամսվա ընթացքում լրացված ներմուծման բոլոր հարցաթերթերի 8-րդ տողում (Ապրանքների մասին հայտարարագրի կամ դրան փոխարինող այլ փաստաթղթի գրանցում մաքսային մարմնի կողմից) արտացոլված ժամանակահատվածների հանրագումարը տվյալ ամսվա ընթացքում լրացված ներմուծման հարցաթերթերի ընդհանուր քանակի վրա բաժանելու միջոցով,

4) «Արգելքների և սահմանափակումների պահպանվածությունը հաստատող փաստաթղթերի ստացման վրա ծախսվող ժամանակահատված» միջինացված ցուցանիշի հաշվարկն իրականացվում է օրացուցային ամսվա ընթացքում լրացված ներմուծման բոլոր հարցաթերթերի 6-րդ տողում (արգելքների և սահմանափակումների պահպանվածությունը հաստատող փաստաթղթերի ստացման վրա ծախսված ժամանակահատված՝ ըստ առանձին փաստաթղթերի) արտացոլված միջինացված ժամանակահատվածների հանրագումարը տվյալ ամսվա ընթացքում լրացված ներմուծման այն հարցաթերթերի ընդհանուր քանակի վրա բաժանելու միջոցով, որոնցում լրացված է հարցաթերթերի 6-րդ տողը: Ընդ որում՝ ներմուծման հարցաթերթի 6-րդ տողում (արգելքների և սահմանափակումների պահպանվածությունը հաստատող փաստաթղթերի ստացման վրա ծախսված ժամանակահատված՝ ըստ առանձին

փաստաթղթերի) արտացոլված միջինացված ժամանակահատվածը հաշվարկվում է յուրաքանչյուր ապրանքի համար ներկայացված բոլոր փաստաթղթերի ստացման վրա ծախսված ժամանակահատվածի հանրագումարը փաստաթղթերի քանակի վրա բաժանելու միջոցով:

6. Հարցաթերթերում լրացված տեղեկատվության հիման վրա արտահանվող ապրանքների մասով առանձին գործողությունների ծախսատարության միջինացված ցուցանիշների հաշվարկն իրականացվում է հետևյալ կարգով՝

1) «Մաքսային հայտարարագրի լրացման և մաքսային մարմիններին ներկայացման վրա ծախսվող ընդհանուր գումար» միջինացված ցուցանիշի հաշվարկն իրականացվում է օրացուցային ամսվա ընթացքում լրացված արտահանման բոլոր հարցաթերթերի 2-րդ տողում (ապրանքների մաքսային հայտարարագրի կամ դրան փոխարինող այլ փաստաթղթի լրացման և մաքսային մարմիններին ներկայացման վրա ծախսված ընդհանուր գումար՝ ըստ մաքսային հայտարարագրով հայտարարագրված առանձին ապրանքների) ներկայացված արժեքների հանրագումարը տվյալ ամսվա ընթացքում լրացված արտահանման հարցաթերթերի ընդհանուր քանակի վրա բաժանելու միջոցով,

2) «Արգելքների և սահմանափակումների պահպանվածությունը հաստատող փաստաթղթերի ստացման վրա ծախսվող ընդհանուր գումար» միջինացված ցուցանիշի հաշվարկն իրականացվում է օրացուցային ամսվա ընթացքում լրացված արտահանման բոլոր հարցաթերթերի 3-րդ տողում (արգելքների և սահմանափակումների պահպանվածությունը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերի (լիցենզիաներ, թույլտվություններ, հավաստագրեր և կամ այլ փաստաթղթեր) ստացման վրա ծախսված ընդհանուր գումար՝ ըստ մաքսային հայտարարագրով հայտարարագրված առանձին ապրանքների) ներկայացված արժեքների և 4-րդ տողում (ապրանքների ծագման սերտիֆիկատների ստացման վրա կատարված ծախսերի ընդհանուր գումար՝ ըստ մաքսային հայտարարագրով հայտարարագրված առանձին ապրանքների) ներկայացված արժեքների հանրագումարը տվյալ ամսվա ընթացքում լրացված արտահանման այն հարցաթերթերի ընդհանուր քանակի վրա բաժանելու միջոցով, որոնցում լրացված են հարցաթերթերի 3-րդ և (կամ) 4-րդ տողերը:

7. Հարցաթերթերում լրացված տեղեկատվության հիման վրա արտահանվող ապրանքների մասով առանձին գործողությունների համար պահանջվող

փաստաթղթերի քանակի մասով «մաքսային ձևակերպման ընթացքում մաքսային մարմիններին տրամադրվող փաստաթղթերի ընդհանուր քանակ» միջինացված ցուցանիշի հաշվարկն իրականացվում է օրացուցային ամսվա ընթացքում լրացված բոլոր արտահանման հարցաթերթերի 5-րդ տողում (արտահանման մաքսային ձևակերպումների ժամանակ տրամադրված փաստաթղթերի ընդհանուր քանակ (բացի մաքսային հայտարարագրից) ներկայացված փաստաթղթերի ընդհանուր քանակը տվյալ ամսվա ընթացքում լրացված արտահանման հարցաթերթերի ընդհանուր քանակի վրա բաժանելու միջոցով:

8. Հարցաթերթերում լրացված տեղեկատվության հիման վրա արտահանվող ապրանքների մասով առանձին գործողությունների ժամանակատարության միջինացված ցուցանիշների հաշվարկն իրականացվում է հետևյալ կարգով՝

1) «Ապրանքների մասին հայտարարագրի կամ դրան փոխարինող այլ փաստաթղթի ներկայացումից մինչև դրա գրանցում մաքսային մարմինների կողմից» միջինացված ցուցանիշի հաշվարկն իրականացվում է օրացուցային ամսվա ընթացքում լրացված արտահանման բոլոր հարցաթերթերի 8-րդ տողում (ապրանքների մասին հայտարարագրի կամ դրան փոխարինող այլ փաստաթղթի գրանցում մաքսային մարմնի կողմից) արտացոլված ժամանակահատվածների հանրագումարը տվյալ ամսվա ընթացքում լրացված արտահանման հարցաթերթերի ընդհանուր քանակի վրա բաժանելու միջոցով,

2) «Արգելքների և սահմանափակումների պահպանվածությունը հաստատող փաստաթղթերի ստացման վրա ծախսվող ժամանակահատված» միջինացված ցուցանիշի հաշվարկն իրականացվում է օրացուցային ամսվա ընթացքում լրացված արտահանման բոլոր հարցաթերթերի 6-րդ տողում (արգելքների և սահմանափակումների պահպանվածությունը հաստատող փաստաթղթերի ստացման վրա ծախսված ժամանակահատված՝ ըստ առանձին փաստաթղթերի) արտացոլված միջինացված ժամանակահատվածների հանրագումարը տվյալ ամսվա ընթացքում լրացված արտահանման այն հարցաթերթերի ընդհանուր քանակի վրա բաժանելու միջոցով, որոնցում լրացված է հարցաթերթերի 6-րդ տողը: Ընդ որում՝ արտահանման հարցաթերթի 6-րդ տողում (արգելքների և սահմանափակումների պահպանվածությունը հաստատող փաստաթղթերի ստացման վրա ծախսված ժամանակահատված՝ ըստ առանձին փաստաթղթերի) արտացոլված միջինացված

ժամանակահատվածը հաշվարկվում է յուրաքանչյուր ապրանքի համար ներկայացված բոլոր փաստաթղթերի ստացման վրա ծախսված ժամանակահատվածի հանրագումարը փաստաթղթերի քանակի վրա բաժանելու միջոցով: